ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները, առաջարկվող կարգավորման բնույթը.

Ընթերակայի ինստիտուտը քրեական դատավարության առավել հին և պահպանողական ինստիտուտներից է, որը գոյություն ունի մոտ 4 դար և առաջին անգամ ամրագրվել է 1649թ.-ի Եկեղեցական օրենսգրքում: Մինչ օրս ընթերակաների ինստիտուտը որևէ էական բարեփոխումների չի ենթարկվել, այն պարագայում, երբ քրեական դատավարության գիտության մեջ և գործնականում մշտապես քննարկվել է այս ինստիտուտը արմատապես վերանայելու անհրաժեշտությունը[1]: Ընթերակայի ինստիտուտը կարող էր առաջադիմական համարվել միայն ինկվիզիցիոն դատավարության ժամանակ, ինչպես այն տեղի է ունեցել 1649թ: Դատավարագետները և պրակտիկ իրավաբանները պնդում են, որ մրցակցային դատավարության պայմաններում ընթերակայի ինստիտուտը, որպես ապացույցների միանշանակ հավաստիության ապահովման յուրահատուկ միջոց, կորցրել է իր արդիականությունը[2]. Դատավարագետների բացարձակ մեծամասնությունը կողմ է ընթերակայի ինստիտուտի վերացմանը կամ դրա կիրառության ոլորտի էական սահմանափակմանը[3]:

ՀՀ քննչական կոմիտեի գործունեության ընթացքում կրկին վերահաստատվեց, որ ընթերակայի ինստիտուտի առկա կարգավորումները շատ դեպքերում ինքնանպատակ են և բացասական են ազդում նախաքննության արդյունավետության վրա, առանց իրավաչափ նպատակի ներազդում են մարդու իրավունքների սահմանափակման ծավալի վրա, իսկ առանձին դեպքերում՝ ընթերակաների ներգրավումը քննչական գործողություններին վտանգում է ընթերակաների կյանքը և առողջությունը: Օրինակ՝ մարտական դիրքերում կատարված սպանությունների գործերով դեպքի վայրի զննությանն ընթերակաների ներգրավումը իրական վտանգ է ստեղծում ընթերակաների կյանքի համար:

---

[1] Хитрова О.В. Участие понятых в российском уголовном судопроизводстве. М.: Спарк. – 1998. С. 79.

[2] Калугин А. Понятой в уголовном процессе // Российская юстиция. 1998. N 10. С. 11; Загвоздкин Н.Н. Об участии понятых в российском уголовном процессе // Дальневосточные криминалистические чтения. Вып. 4: Сб. науч. тр. Владивосток: Изд-во Дальневосточ. ун-та, 1999. С. 58 - 59.

[3] Михайлов А. Институт понятых - архаизм российского судопроизводства // Законность. 2003. N 4. С. 29 - 31; Белоусов А.В. О необходимости изменений в институте понятых // Прокурорская и следственная практика. 2003. N 3. С. 104 - 106; Кожевников И.Н. Упорядочить полномочия следователя // Российская юстиция. 1997. N 12. С. 22 - 24.

Այսպիսով, առավել ընդհանրական կարելի է նշել ընթերակաների ներգրավման հիմնական խնդիրները.

Ընթերակայի ներգրավման ինստիտուցիոնալ համակարգի և ընթացակարգի բացակայություն.

Ընթացիկ օրենսդրությամբ նախատեսված չէ ընթերակաների ներգրավման ինստիտուցիոնալացված ընթացակարգ, բացակայում է որևէ տեղեկատվական համակարգ, որի հիման վրա հնարավոր կլիներ հրավիրել ընթերակաների, բացակայում է ընթերակաների մասնակցությամբ պայմանավորված նրանց ծախսերի հատուցման մեխանիզմները :

Ընթերակաների ներգրավման ինստիտուցիոնալ համակարգի և ընթացակարգերի բացակայությունը էապես բարդացնում է ՀՀ քննիչների և հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից ընթերակա հրավիրելու աշխատանքի կազմակերպումը, ինչը բացասաբար է ազդում աշխատանքի արդյունավետության վրա: Ընթերակայի ներգրավման օրենսդրական կարգի բացակայությունը պարունակում է նաև կրիմինոգեն ռիսկեր, քանի որ գործնականում հանդիպում են գոյություն չունեցող «ընթերակաների» ինստիտուտի կիրառումը[4]:

Նման դեպքերում դժվարանում է նաև դատարանում մեղադրանքի պաշտպանությունը, քանի որ պաշտպանները հաճախ ընթերակայի բացակայության հիմքով վիճարկում են ապացույցի թույլատրելիությունը:

Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում կատարվող քննչական գործողություններին ընթերակայի ներգրավման անթույլատրելությունը.

Օրինակ՝ մարտական դիրքերում կատարված սպանությունների գործերով դեպքի վայրի զննությանն ընթերակաների ներգրավումը իրական վտանգ է ստեղծում ընթերակաների կյանքի համար:

Բարոյահոգեբանական տեսանկյունից առանձին քննչական գործողություններին ընթերակայի մասնակցության անթույլատրելիությունը:

Առանձնակի դժվարություններ է առաջացնում արտաշիրմմանը կամ դիակի ճանաչման ներկայացմանը ընթերակայի մասնակցությունն ապահովելու հարցը: Բանն այն է, որ արտաշիրմումը և դիակը ճանաչման ներկայացնելը հոգեբանա-զգացմունքային

---

[4] Վարձու և գոյություն չունեցող ընթերակաները քննչական գործողություններում: Առավոտ, Հոկտեմբեր 27 2014, Վարդան Պետրոսյանի գործով ընթերակայի մասին տեղեկություններ չկան: Ֆաստինֆո, 04/26/2014, Վկային հարցաքննել են ռեստորանում, ավտոբուսն էլ «բերման են ենթարկել» ու «պահ տվել» ոստիկանության շենքին: Տեսանկյուն, 29-07-2015 և այլն:

էական ազդեցություն են թողնում ընթերակաների մոտ: Տեսության մեջ նշվում է, որ քննչական գործողությունների իրականացմանը որպես ընթերակա ցանկացած չշահագրգռված անձի ներգրավումը ունի նաև բարոյական տեսանկյուն: Բարոյական է արդյոք ստիպել սովորական քաղաքացիներին ամենայն մանրամասնությամբ զննել այլանդակված դիակ, որի տեսքը գարշանք է առաջացնում անգամ փորձառու մասնագետների մոտ[5]: Առավել նպատակահարմար կլիներ այս գործողությունները կատարվեին միայն դատաբժշկության բնագավառի մասնագետի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այլ մասնագետի մասնակցությամբ[6]:

Ժամանակակից գիտատեխնիկական միջոցների կիրառմամբ քննչական գործողությունների ընթացքն օբյեկտիվ կերպով (տեսանկարահանում, ձայնագրառում) ամրագրելու հնարավորության պայմաններում, ընթերակայի ինստիտուտի համակարգային բարեփոխումների անհրաժեշտությունը դառնում է հրատապ:

ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է ընթերակայի մասնակցությունը զննմանը (Հոդված 218.), արտաշիրմմանը (Հոդված 219), քննմանը (Հոդված 220), դիակը, անձին կամ առարկաները ճանաչման ներկայացնելուն (Հոդված 221-224), խուզարկությանը և առգրավմանը (Հոդված 227), անձնական խուզարկությանը (Հոդված 229), նմուշներ ստանալուն (Հոդված 255), քննչական փորձարարությանը (Հոդված 242), ինչպես նաև հեռախոսային խոսակցությունների ձայնագրված ժապավենը քննիչի կողմից լսմանը (Հոդված 241), նամակագրության զննմանը և առգրավմանը (Հոդված 240): Ինչպես նկատում ենք ՀՀ քր. դատ. օր–ը քննչական գործողությունների բացարձակ մեծամասնությանը՝ ընթերակաների մասնակցությունը համարում է պարտադիր:

Ընթերակայի ինստիտուտի բարեփոխման ընդհանուր զարգացման միտումները ցույց տալու համար մեջ բերենք հետևյալ երկրների փորձը.

Համաձայն Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի քննիչը, դատախազը պարտավոր են հրավիրել երկուսից ոչ պակաս անձանց այնպիսի քննչական գործողությունների կատարման ժամանակ, ինչպիսիք են անձին, դիակը կամ առարկաները ճանաչման ներկայացնելը, դիակի զննությունը, այդ թվում նաև արտաշիրմումը, քննչական փորձարարությունը և քննումը:

Վրաստանի քրեական դատավարության օրենսգիրքի 331-րդ հոդվածը նախատեսում է ընթերակայի մասնակցությամբ քննչական գործողությունների ընդամենը երկու դեպք.

---

[5] Камынин И.Д. Допустимость доказательств // Уголовный процесс. 2006. № 4. С. 64..

[6] Шарун В. В. Организационно-тактические особенности производства отдельных следственных действий с участием понятых :Автореф. Дисс. канд.юрид.наук.Калининград, 2007.

խուզարկություն և առգրավում: Նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ մինչև քննչական գործողություն սկսելը մեղադրյալին տրվում է 1 ժամվա ընթացքում ընթերականեր հրավիրելու հնարավորություն, իսկ 4-րդ մասը նախատեսում է, կյանքին և առողջությանը իրական վտանգ սպառնալու և ապացույցների վնասման, ոչնչացման կամ հանցագործության հետքերը թաքցնելու իրական վտանգի առկայության դեպքում քննչական գործողությունները կատարել առանց ընթերակաների:

Ռուսաստանի Դաշնությունում 2013 թվականի մարտի 15-ին ուժի մեջ մտած փոփոխություններով ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքով ընթերակաների պարտադիր մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների թիվը կրճատվել է չորսի, դրանք են՝ բնակարանի և այլ շինությունների խուզարկությունը, տեղեկություն պարունակող էլեկտրոնային կրիչի առգրավումը, անձնական խուզարկությունը, անձին, առարկաները և դիակը ճանաչման ներկայացնելը: Քննիչի **հայեցողությամբ** ընթերականեր կարող են ներգրավվել հետևյալ քննչական գործողություններին. գույքի վրա կալանք դնել, դեպքի վայրի տեղանքի, շինությունների, առարկաների, փաստաթղթերի զննում,դիակի զննում, արտաշիրմում, առգրավում՝ բացառությամբ տեղեկություն պարունակող էլեկտրոնային կրիչի առգրավումը, քննչական փորձարարություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների զննումը, առգրավումը և դրանց պատճենները վերցնելը, հեռախոսային խոսակցությունները լսելը, ցուցմունքները տեղում ստուգելը:

ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը քննիչին հնարավորություն է տալիս դժվարհասանելի վայրերում՝ հաղորդագրության համապատասխան միջոցների բացակայության դեպքում, ինչպես նաև կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում կատարվող քննչական գործողությունները կատարել առանց ընթերակաների, ինչի մասին քննիչը արձանագրության մեջ կատարում է համապատասխան գրառում և ստորագրում է այն: Քննչական գործողություններին ընթերակայի չներգրավելու դեպքում քննիչը **պետք է** տեսանկարահանի քննչական գործողության ողջ ընթացքը: Իսկ եթե նման պայմաններում հնարավոր չէ օգտագործել տեխնիկական միջոց, ապա քննիչը արձանագրության մեջ համապատասխան նշում է կատարում:

Ընթերակաների մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների թիվը կրճատելուց զերծ չի մնացել նաև Ղազախստան Հանրապետությունը՝ հասցնելով դրանք երեքի. բնակարանի զննում, խուզարկություն, անձնական խուզարկություն: Նույն օրենսգրքի 90-րդ հոդվածը, սահմանում է, որ որպես ընթերակա չեն կարող լինել իրավապահ

մարմինների աշխատակիցներից բացի նաև հատուկ մասնագիտացված իրավաբանական ԲՈՒՀ-երի ուսանողները և պրոբացիոն հսկողության տակ գտնվող անձինք:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նշվում էր, որ եթե բնակելի, ծառայողական շինությունների խուզարկությունը կատարվում է առանց դատավորի կամ դատախազի ներկայության,ապա հնարավորության դեպքում խուզարկությանը պետք է ներգրավել համայնքային մեկ ծառայողի կամ համայնքի երկու անդամի, որոնք չեն կարող լինել ոստիկանության կամ դատախազության ծառայողներ:

Ընթերակաների ինստիտուտը իսպառ բացակայում է Ֆրանսիայում, Կանադայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Մեծ Բրիտանիայում: Օրինակ՝ Չինաստանում փորձագետները դա բացատրում են նրանով, որ անթույլատրելի է կողմնակի անձանց ներգրավումը քննչական գործողություններին, իսկ Գերմանիայում գտնում են, որ այլ անձանց ներկայությունը լուրջ վտանգ է հետաքննության համար, քանի որ ամեն մի մանրուք կարող է անդառնալի փոփոխությունների ենթարկվել, դրանով իսկ հետագա ԴՆԹ և այլ հետազոտությունների ճշմարտացիությունը հարցականի տակ դնել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունները և լրացումներն հիմնված են հետևյալ դրույթների վրա.

1. Ընթերակա չեն կարող հրավիրվել հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցներից: Միևնույն անձը մեկ ամսվա ընթացքում միևնույն գործով կարող է ներգրավվել որպես ընթերակա ոչ ավելի, քան երկու անգամ:

Նախագծում տրվել է նաև տեսաձայնագրառման ընթացակարգին վերաբերող չափանիշներ: Հետաքննության մարմինը կամ քննիչը տեխնիկական միջոցներ կիրառելուց առաջ ստուգում է դրանց սարքինությունը: Տեսաձայնագրառումը պետք է իրականացվի քննչական գործողության սկսելու պահից, առանց ընդհատման, բացառությամբ անկանխատեսելի տեխնիկական անսարքության կամ այլ օբյեկտիվ պատճառների առկայության դեպքերի: Տեսաձայնագրառման ընդհատման դեպքում քննչական գործողությունն ընդհատվում է, որի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն, որտեղ նշվում են ընդհատման պատճառների մասին: Քննչական գործողության կատարումը շարունակվում է տեսաձայնագրառումը վերսկսելու պահից: Մինչ այդ, հետաքննության մարմինը կամ քննիչը միջոցներ է ձեռք առնում քննչական գործողության կատարման վայրը, հետքերը և առարկաները պահպանելու ուղղությամբ: Տեսաձայնագրառման դեպքում ապահովվում է քննչական գործողության ընթացքի ամբողջականությունը,

տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և լսելիությունը: Տեսաձայնագրառման նյութերը ենթակա չեն մոնտաժման կամ այլ կերպ փոփոխության:

2. Քննչական գործողությունների կատարման ժամանակ ընթերակայի մասնակցության տեսանկյունից նախագծում տարբերակվել են հետևյալ իրավիճակները՝

Առաջին՝ քննչական գործողություններ, որոնց ընթերակայի մասնակցությունը պարտադիր է:

Քննիչը, հետաքննության մարմինը ընթերականեր է հրավիրում միայն քննչական փորձարարության, անձին կամ առարկաները ճանաչման ներկայացնելու, խուզարկության, առգրավման, զննման կատարմանը, բացառությամբ սույն հոդվածի 6–րդ մասով նախատեսված դեպքերի և սույն օրենսգրքի 240–րդ հոդվածով նախատեսված նամակագրության առգրավմանն ու զննմանը:

Զննմանն ընթերականեր չեն հրավիրվում եթե՝

1) փաստաթուղթը կամ առարկան զննվում է այն ներկայացրած Ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ նրա ներկայացուցչի մասնակցությամբ և փաստաթուղթը (կամ դրա պատճենը) կամ առարկան կցված է քրեական գործին.

2) կապի օպերատորներից օրենքով սահմանված կարգով ստացված մուտքային և (կամ) ելքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների (sms) վերծանումների, աբոնենտների տվյալների, հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների հասցեների մասին փաստաթղթերը կամ դրանց պատճենները կցված են քրեական գործին.

3) սույն օրենսգրքի 241–րդ հոդվածով, «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14–րդ հոդվածի 1–ին մասի 12–րդ կետով նախատեսված գործողությունների արդյունքում ձեռքբերված ձայնագրությունները կցված են քրեական գործին:

Երկրորդ՝ քննչական գործողություններ, որոնց ընթացքը միայն տեսաձայնագրառվում է: Այս ռեժիմով կատարվում է դիակը ճանաչման ներկայացնելը, որի ընթացքը և արդյունքներն ամրագրվում են տեսաձայնագրառման կիրառումով:

Երրորդ՝ քննչական գործողություններ, որոնց մասնակցում են գործի ելքով չշահագրգռված մասնագետներ կամ փորձագետներ: Նկատի ունենալով, որ քննչական գործողություններին մասնակցում է անաչառ մասնագետը կամ փորձագետը, ուստի ընթերակայի ներկայությունն անհրաժեշտ չէ: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելության պաշտպանության անհրաժեշտությունը, առանձին դեպքերում բացառվել է նաև տեսաձայնագրառումը:

Այս խումբ քննչական գործողություններն են՝

1. Քննումը կատարվում է բժշկի կամ դատաբժշկության բնագավառի մասնագետի մասնակցությամբ: Եթե քննումը չի զուգորդվում քննվող անձին մերկացնելու հետ, ապա քննվող անձի համաձայնությամբ նրա մարմնի վրա առկա հանցագործության հետքերը կամ հատուկ նշանները կարող են լուսանկարահանվել կամ տեսաձայնագրառվել (հայեցողական տեսաձայնագրառում):

2. Արտաշիրմումը կատարվում է քննիչի և դատաբժշկության բնագավառի մասնագետի, իսկ անհրաժեշտության դեպքում այլ մասնագետի մասնակցությամբ: Արտաշիրմման ընթացքը և արդյունքներն ամրագրվում են տեսաձայնագրառման կիրառումով (պարտադիր տեսաձայնագրառում):

3. Մարդուց նմուշ ստանալը կատարվում է փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ: Դիակի, կենդանու, նյութի և այլ օբյեկտների հատկությունները բնութագրող նմուշների ստացումը կատարվում է փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ կամ տեսաձայնագրառմամբ (հայեցողական տեսաձայնագրառում):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարդուց նմուշներ ստանալը անձնական կյանքի անձեռնմխելիության տեսանկյունից նպատակահարմար չէ տեսաձայնագրառել, այդ իսկ պատճառով նախագծով որպես երաշխիք համարվել է փորձագետի կամ մասնագետի պարտադիր մասնակցությունը: Ընդ որում, սերմնահեղուկի, մաշկի մանրադիտակային քերվածքների, քրտինքի և այլ արտաթորանքների նմուշներ ստանալը կատարվում է միևնույն սեռին պատկանող փորձագետի կամ մասնագետի մասնակցությամբ:

Չորրորդ՝ քննչական գործողություններ, որոնց ընթերակա չի մասնակցում կամ դրանց ընթացքը չի տեսաձայնագրառվում: Այս խումբ քննչական գործողությունների ցանկում է ընդգրկված այն դեպքերը, երբ փաստաթղթերը, առարկաները կցվում են քրեական գործին և կարող են յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից հետազոտվել: Նման պայմաններում վերանում է այն տեսաձայնագրառելու կամ, առավել ևս, ընթերակայի մասնակցությամբ զննելու անհրաժեշտությունը: Այս խումբ քննչական գործողություններն են՝

1. անձի մասնակցությամբ նրա ներկայացրած փաստաթղթերի ու առարկաների զննություն,

2. ձայնագրությունը զննելու և լսելու, նամակագրությունը զննելու և առգրավելու ընթացքում մասնակցում են գործի ելքով չշահագրգռված մասնագետներ, կապի հաստատության ծառայողներ, հետևաբար նրանց լրացուցիչ ընթերակայի կարգավիճակ տալու անհրաժեշտությունը բացակայում է (Նախագծի 5–րդ հոդվածով նախատեսված դեպքեր):

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է սահմանափակել ընթերակաների մասնակցությամբ կատարվող քննչական գործողությունների քանակը, որպես այլընտրանք նախատեսելով տեսաձայնագրառումը և մասնագետների կամ փորձագետների մասնակցությունը, ինչը կապահովի քննության արդյունավետությունը և օբյեկտիվությունը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե:

4. Ակնկալվող արդյունքը

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարձրացնել քննչական գործողությունների կազմակերպման արդյունավետությունը՝ վերացնելով առանց իրավաչափ նպատակի ընթերականեր ներգրավելու կարգավորումները: